Փողոցումը երկու մուրացկաններից մէկը ձայն էր տալիս թէ Աստուած ինձ ողորմեա. իսկ միասը թէ Թագաւոր քեզանից եմ ողորմութիւն իննդրում: Թագաւորն անց կենալիս երկուսի ձայնն էլ լսեց, ու վերադառնալով իւր տեղը հարթեր ոսկի զրեց մէկ ափսէի մէջ, վրէն էլ առատորէն փլաւ ածեկ տուեց ու զրկեց էն աղքատին, որ անդադար իր անձանն էր յիշում: Երբ նա կերաւ, կշտացաւ, մնացածը տուեց միաս աղքատին, որ Աստուծոյ անունն էր տալիս: Սա էլ կերաւ, տեսաւ, փլաւի տակից ոսկիք դուրս եկան, ածեց պարկի մէջ ու զնաց: Միւս օրը Թագաւորը կրկին անց կենալիս, տեսաւ էն աղքատների մինը նստած դարձեալ իր անունն է տալիս ու ողորմութիւն իննդրում, տասց, ա մարդ, հարթեր ոսկին որ երեկ փլաւի տակին դարսած ուղարկեցի, բաւական չ'է քեզ նա պատասխանեց, Թագաւոր, ես ոսկի չեմ տեսել:

— Մի՛թէ փլաւից դու չ'կերար: Դիլիից ես կերայ, մնացեալը տուի միւս աղքատին: — Ուրեմն, ասաց թագաւորը, դու էլ գնաայսուհետեւ միւս աղքատի նման Աստուծուց ողորմութիւն խնդրէ, թող նա շնորհէ քեզ:

\* \* \*

Արեսայէլ Թամամշովը իր հօր Գէփօյի հիւանդութեան ժամանակը լաց էր ընտւմ, հէրն ասեց, որդի ի՞նչ ես էդքան նեղանում, քեզ համար մեծ կարողութիւն եմ թողնում, տներ, հողեր, այգիներ և այլն, որիշ աղքէր էլ չունիս որ քեզ հետ վէճ բանայ, ուրեմն կը նստես, ուրախ ուրախ կը վայելիս: Բաստամեանց Ատէփոն բժիշկն ասաց, Աղա Գէփօյ, որդիդ լաց է ընտւմ ոչ թէ մեռնելուդ համար, այլ նրա համար որ վախենում է էլի առողջանաս:

\* \* \*

Աստուծին իմացում տուին թէ մինելը քեզ էր անց վերայ Թագաւոր են ընտրել նա տրտմեց. Երբ պատճառը հարցրին, պատասխանեց թէ, վախումեմ որ փոշմաննեն:

\* \* \*

Ուկը խնդրեց Թագաւորին որ իրան հարիւր

թուման բաշխէ. շատ լաւ, ասաց թագաւորը, կը  
բաշխեմքեզ հարիւր թուման էն պայմանաւ, որ  
եղօրդ էլ երկու հարիւր տամ: Նա պատասխանեց,  
ուրեմն հրամայեցէք որ իմ մէկ աչքը հանեն, որպէս  
զի եղրօրս էլ երկու աչքը հանեն:

\* \*

Եօթն եղբայրներ իրանց մէկ փեսի հետ նստած  
էին, յանկարծ հոգիհան հրեշտակը յայտնուեցաւ,  
ասաց ձեղանից երկուսի հոգին առնելու եմ, ովկեմն  
ջոկէք տեսնենք ո՞ւ մնէ ընկնում էս մահք: Նրանք  
բոլորն էլ աչքերները չուցին փեսի վերայ, և նա  
ասաց, պարուներ, ես էն երկուսից մէկը, պատրաստ-  
եմ, բայց ձեղանից ո՞րն է հոգի տալու, ընտրեցէք  
տեսնենք:

\* \*

Բաղամ—դադէն ասում էր, երբ ես երիտասարդ  
էի, կարգում ու լուսում էի բայց, երանի աղքատաց,  
զի նոյա է արքայութիւնն երկնից՝ այս պատճառաւ  
ես էլ ոչ մի գործի քամակից չէի գնում, շատ թէ  
քիչ ունեցած վողերս մախումէի ու պարապ շրջում:  
Բայց հիմայ տեսնում եմ, որ աղքատը ոչ թէ երա-  
նելի է ու արքայութիւն կարող է վայելել այլ ընդ  
հակառակը այնքան թշուառէ, որ նրա համար էն  
կեանքում արքայութեան դուռը կողպած կը լինի:

Իսկ այս հարուստները, որոնք էս կեանքում շքեղ ու  
պերճ ապրում են, ողորմութիւն են բաշխում, որ-  
քեր են պահում, վանքեր, եկեղեցիներ են շնումն  
նրանք աւելի շուտ կերթան արքայութիւն, քան թէ  
մուրացկաները, որ մարդկութեան համար աւելորդ  
ծանրութիւն են:

\* \*

Պլոկուած մարդկցը հարցրին, — գողերն ի՞նչ  
տարան քեզանից. նա պատասխանեց, հարիւր թօփ  
կտաւ, բայց մէկ բանում նրանց աչքը հանեցի, որ  
կտաւների մէջ 10 թօփը ուժ ուժ դադանոց էին:

\* \*

Շամբեցին իւր ծնողաց հոգու համար ձէթ էր  
խոստացել նախավկայի վանքին, բայց տասը տարի  
էր, այս ուխտը չէր կատարում: Մէկ անգամ երկու  
տիկ ձէթ ձիու վերայ բարձած Խօյ էր տանում ծա-  
խելու, յանկարծ ձին վայր ընկաւ, տիկի մէկը պա-  
տրուեցաւ, և նա ասաց — ով Սուրբ Ստեփանոս  
նախավկայ, քեզ մատաղ, էս ձէթը ընդունէ հօրս  
հոգու համար: Նատ չ'անցաւ, միւս տիկն էլ պատը-  
ռուեցաւ, այն ժամանակն ասաց — ուուրբ նախավկայ,  
էս տիկն էլ մօրս հոգու համար եմ տալիս, որ մէր  
մէջն էլ հաշիւ չ'մնայ:

\* \*

Ե, Ն, Հարցրեց Տ. Պ.ին թէ, Էս եանալրադ նայ  
պրշնիկովին չիմ ծանչնում, ո՞ւմ վերթիէ, Պարաւ  
բաղցի՞ է, զոկէ, շանձրագէ՞ թէ կրօյէ? Նա պատառ  
խանեց, վուչ մէկէմն չէ, նուխցի էուց դիմաւ գմբուց  
— Նուխցին էլ ծան ճրագ չէ: Պո պատմաբասդան  
— Զէ, նա էսաղցի կնիկէ առի: մ. մ. մ. մ.  
— Ի՞նչ է, կնիկ փուր էստի առիլէ, քաղցի կու  
դառնայ. նրա մամին օղօրմի, մէ զափուլ էսաղցի  
կնիկ առնելով հին քաղցի ու էլքնայ դառնայ:

\* \* \*

Աղալար խանը պարսկի հագուստով Թիֆլիսու  
շուկայից անց կենալիս, մէկը Հարցնում է, պարոն,  
Դու ուրիշ ախպէր էլ ունի՞ս:

— Հա ունիմ, ինչի՞ ես հարցնում:  
— Որա ինչի իս էտէնց էրկար զդակ ծածկի  
գլխիդ, գանայ չէիր կանայ դրամէն երկու զդակ էիր  
կարիլ առւի, մէկը դուն էիր ծածկի, մէկէլը ախպէրդ:

\* \* \*

Թիֆլիսում Աղալար խանին մէկ պաս օր սեղա-  
նի վերայ մէկը Հարցնում է, խան, գանայ թուրքիրը  
պաս կու պահի՞ն, վուր դու պահումիս: Նա պատառ  
խանում է. — Ես թուրք չեմ: — Թէ թուրք չիս, աբայ  
ինչի՞ ես ձեռնիրդ հինով կարմիւրի:

\* \* \*

Սոր Զուղայում պապադաւանը մէկ լուսաւոր-  
չական Հայի հաւատ էր ուշունց տուել. բանը հա-  
սաւ թաղապետին, որ երկուսին էլ ուղարկեց վիճա-  
կաւոր արք եպիսկոպոսի մօտ քննել և յանցաւորին  
պատժել Եպիսկոպոսը տեսնելով որ պապադաւանը  
մեղաւոր էր, հրամայեց որ նա ապաշխարելու հա-  
մար երկու օր գայ առաջնորդական պարտէկը քա-  
ղահանէր Երկրորդ օրը Եպիսկոպոսը մտաւ պարտէկը,  
ասաց, — ա մարդ, ինչի՞ ես էս պատուական ծաղիկ-  
ներն էլ փշերի և անպիտան խոտերի ցետ արմա-  
տիցը հանում. նա պաասխանեց, Սրբազնն, եօ մի  
տղէտ մարդ եմ, ի նշ եմ ձանաշում, ծաղիկը ո՞րն է,  
անպիտան խոտը ո՞րն է: — Նթէ այդքան տղէտ ես,  
ասաց Եպիսկոպոսը, աբա ի՞նչպէս իմացար որ պա-  
պադաւանութիւնը գերազանց է սուրբ Լուսաւորչի  
հաւատիցը, որ գեացիր հաւատգ փոխեցիր:

\* \* \*

Ամիր — Խան Սարգարը մտաւ այդին ու նկա-  
տեց որ իր ստորագրեալ աստիճանաւորները նստած  
գինի էին խմում, այնպէս անցաւ, իբր թէ ոչինչ  
չտեսաւ. Նրանք էլ շտապով գինու գաւը թփերի մէջ  
ծածկելով գնացեն նրա հետեւից: Երբ բոլորը միա-  
սին գրօննելով միւս անգամ եկան այն տեղը, տեսաւ  
որ աւանակը թփերն արածել էր ու գինու գաւը  
բացուել, Սարգարն ասաց, մոիկ տուէք, գինին ին

գարշելի և զգուելի բան է, որ էշն էլ իր իշութիւնով չէ մասացել նրա գաւին։ Ներսեսեան միրզայ իւսութքը պատասխանեց, Սարգար, էշն ի՞նչ է իմանում թէ գիսին ինչ արմաղան խմիչք է, եթէ իմանար իհարկէ էշ էլ էլր մնալ։

\* \*

**Ներսիսեան ուսումնարանի աշակերտաները** հարցին ափրացու Մկրտչեց, ինչի՞ ես ուրախանում, որ Պարսից գուքը գալիս է Թիֆլիս առնելու։ Նա պատասխանեց նրա համար, որ մեր ուսումնարանը կ'քանդէն, ես էլ կազմառուիմքերական տաժանելի շարադրութիւներ գրելուց։

\* \*

**Ուսուց զեսպանների մէկը** գանգատում էր Սլաշար խանին թէ, Պարսկաստանի գեղերի մէջ կտոք պահելու յարմար տեղեր չկան։ Նա պատասխանեց, պարօն, ձեր ասածը շատ ճշմարիտ է, ինչպէս և Ուսուաստանումն էր մեր զեսպանների փիղերի համար յարմար տեղեր չլինելով, նրանք էլ իրանց հետ փիղ չեն տանում ու փէշերութն էլ փլաւ եփել անկարելի լինելով, պարտադրվում են մինչև Ս. Պ. Բուրգ քաղցած ձանապարհորդել։

\* \*

**Վախիջնեան կինը** իր ամուսին Սարգսին յանդեմանում էր թէ, դու քո երեխանցը չես սիրում ու նրանց հետ ժամանակ անցկացնելու շնորհք չունիս, որ մարդիս կեանքի առաջին երջանկութիւնն է։ Սարգիսն էլ կանչեց իր փարբ սրբուն, դրեց երկու ծնկան մէջ ու ասաց, Միհիչ, Միհիչ, քօ, քօ։ Միհիչը ահեցը, սկսեց լալ. կինը ասացարարաքալրայ, բարաքալրայ, ինչպէս լաւ սիրեցիր։ \* \*

**Պարսիկ բժիշկը** Սիմոն Սեւաննեանցին բէփանգ ասած լրւծողական գեղով առողջացրեց, այնուհետեւ Սիմոնը ինչ հիւանդի որ պատահէլ էր, թէկուզ աչքը ցաւէր կամ ատամը, \* ականջը, գլուխը, ոոր ձեռը, կասէր, գնա բէփանգ խմէ անպարհառ կ'առողջանաս։

**Ներսէս արք եպիսկոպոսը** (յետոյ Կաթողիկոս) Պօգի Քէթիսուդեանցին այցելու թիւն գնացած ժամանակը խօսակցութեան մէջ հարցնում է թէ ձեր զրսի տներումը ո՞վ է կենում. Քէթիսուդեանցի կինը պատասխանումէ, բնակողների անունները չիմ գիտի, մազբամ էս գիտիմ զուր երեվնեցի շան ձրագնիր ին։ Եզ երեանցիք քանի որ նրկան էին բնակվում թուրքի Ճրագ էն, Հիմի որ Եստեղ էն կինում

ուրեմն ձեր ձրագներն են, ասաց եպիսկոպոսը:

Երկու բու (բայլուշ) ուզում էին խնամութիւն  
անել բայց չէին համաձայնում, որովհետեւ աղջկայ  
հայրը անում էր թէ Ալբահանդումը որքան աւեր-  
ակներ կան, նրանք են աղջկանս բաժինքը, իսկ տղի  
հայրը քիչ համարելով չէր ընդունում, որին երրորդ  
բուն ասաց, — բարեկամ, ինչպէս որ սրանց նահ ա-  
զագետին եմ տեսնում, նահանգի աւերակների թիւը  
չուտով կաւելանայ, ուրեմն առաջմը ընդունիր էն  
սակաւաթիւ աւերակները:

Բագամ—գալի եղբայր Խեկար—լալին բարե-  
կամները յանդիմանում էին երկար միջոց եկեղեցի  
չգնալու համար. նա ասաց—պարոններ, դուք ձ-  
մարիտ քը իստոնեայ չեք, դուք միայն շնորհքի հա-  
մարէք գնում եկեղեցի. եթէ սուտ է խօսքս, խն-  
դրեմ ասէք թէ սեղանի փարագոյրը քանի՛ երկաթէ  
օղեր ունի:

Խուլ Օսկիր հարցրեց Խեկար—լալին ողեր՝  
ինչպէս է. պատասխանեց, շատ ծանր հւանդ է: —  
Փառք Աստուծոյ, յոյս կայ որ շուտով առողջանայ:

Զէ յոյս չկայ, ինչպէս որ տեսնում եմ ի՞ ապրիլ: —  
Աստուծոյ, Աստուծոյ տոյք: չ սղոյ ըմբորդ ոչ  
ու լուսաց Աստուծոյաւ կանաչապահ վայում և առջ  
\* \*

Միջուկնց Աօլոմանը ասաց Տաղինէնց Դա-  
վիթին, առ գնացիր զիմ միղ քիրդ խոստովնեցար տէր-  
տէրին գանայ, քու գլուխ արիվը գիտէնայ, լաւ բան  
տրիր, ինչքլի հիմի քու միղքէրիդ օօլ վկայ չկար,  
հիմի վկայ ձարէցիր, վուրէ էն կեանքումը ու փրօ  
հաստատուի շինքիդ:

Տատոյէնց Դափիմը նարգումը շատ փող տա-  
նուելուց յետոյ կէս գիշերին գնում էր իրանց տունը,  
ձանապարհին յանկարծ շները վրայ թափուեցան,  
նա էլ գլակը ձեռքն առած նրանց վախացնելով  
ասում էր, շէշ ու բէշ շէշ ու բէշ դու շէշ դու շէշ:

Խոստավանորդին թռղութիւն էր խնդրամ տէր-  
տէրից, զր մէծապափ սկզբի և վերջե մի մի շարաթ-  
ները պահել էր, ու միւները լուծել. Տէր հայրը  
ասաց նորան, հանդարտուիր, ուրիմս, լաւէ, որ գու  
սկիզբն ու վերջն էլ պահելես, բա կս ինչ անեմ որ  
սկիզբն էլ վերջն էլ մեջել հաւասար կերել եմ:

Մի ձանապարհորդ ոտով գնալուց շատ յոդ-  
նելով, հանգիստ է առնում մի քարի վերայ ու Սստուծ-

կանչում, որ գրաստ հաօցնի իրան հեծնելու. Խսկոյն  
էն կողմից դուրս է գալիս մի ձիաւոր ու խեղճ մար-  
դուն մորակե հարուածներով ստիպումէ շալակել իր  
ձիու գալքած քուրակը: Մարդը յուսահատած ա-  
սումէ, — էս ի՞նչ բան ա քո արածդ Աստուած կամ  
ես չկարողացայ քեզ հասկացնել: կամ դու ինձ  
հասկացար:

\* \* \*

Մի գիւղացի մարդ \* ուզում է գնալ քաղաք,  
կինը նորան արգելում է: \* մարդու համբերութիւնը  
հատնելով բարկանում է կնոջ վերայ ու ոցից՝ ա-  
սելով դուրս գնում: կինը առանց հասկանալու ցից  
բառի նշանակութիւնը, ասումէ: — քա, մինչեւ երբ  
ցից մեամի որ գու գաս:

\* \*

Մարդու մեկը եկեղեցում քահանայի առաջ  
ընքած խոստվանվում էր, էս միջոցին գողացաւ  
խոստովանոհօր ժամացոյցը ու ասաց, մեղայ Աստու-  
ծոյ, տէր հայր, մի ժամացոյց եմ գողացել: — Քահա-  
նայն նորսն ասաց, տիրոջը տուր, որդի, մեղքէ:  
Խոստովանոհօրին պատասխանեց, տէր հայր քեզ  
տամ, դու տուր տիրոջը: — Զէ որդի տար քո ձեռ-  
ովը տուր տիրոջը: — Տակիս եմ չէ առնում:

Հորհեսցէ. էս խօսքով արձակեց նորան միամիտ  
խոստովանահայրը ու յետոյ ժամացոյցը Ծգաւ-  
իւր ծոցումը:

\* \* \*

Երկու աղքատ ընկերներ գնացին Պարսկաստան  
մշակութեամբ փող աշխատելու. մի օր սրանք պա-  
տահելով մի մեծ քաղաքի հրապարակում մարդկանց  
բաղմութեան, հարցնում էն մէկից պատճառը, և  
նա պատասխանումէ, — այսօր թագաւորի ընտրու-  
թեան օրէ, և ընտրովն է ահա այն բաղին ցցց տա-  
լով) որ պատոյ է գալիս օդի մէջ, ում գլխի վերայ  
որ իջնի, նա կ'լինի թագաւորը: Ոյս խօսքից յետոյ  
երկու ընկերներից փոքրը մի առանձին ուրախութիւն  
զգալով իւր մէջ մեծին ասաց, — եղբայր, եթէ Աս-  
տուած կամենայ, բագէն քեզ թագաւոր ընտրի, ինձ  
ինչ կ'առա:

Այս, տեսնում ես էդ ծառը, զրատակին կ'կան-  
գընեօ, մինչեւ ես անց կենալով կ'կանչեմ քեզ ու իմ  
առաջին վեզիրը կ'շինեմ: ասաց մեծ ընկերը ու տե-  
սաւ բազէն իւր գլխին, ժողովուրդը խկոյն արքունա-  
կան շորերը հադցելով նորան, տարաւ նստացրեց  
իւր գահի վերայ. մի քանի օրից յետոյ էս նոր թա-  
գաւորը դուրս գնալով քաղաք, անցաւ այն ծառի  
մտից, որի տակին իւր խեղճ ընկերը գողալով կանգ-  
նաց սպասում էր իւր ողորմութեան, երբ թագաւորը

ուշ չգարձնելով նրա վերայ, արդէն բառականէ հեռաց-  
ցել էր, ընկերը վաղեց, ընկաւ նորա ոսքերը ու լաւ-  
լով աղաշեց, —թադաւոր, յիշիր խոստմննքդ, ողբա-  
մի՛ ինձ, ես չորացայ կանգնելով այս ծառի տակ.  
եկար, ինձ չտեսար ու անշար: —Օ՛քչնած, ի՞նչ ես  
տում, եթէ ահազին ծառը ես չտեսայ, քեզպէս  
մի փոքր մարդը ի՞նչպէս տեսնէի, պատասխանեց  
թագաւորը, շարունակելով իւր ճանապարհը:

Երկու գող այգումը ինձորի ծառի բառականի ծառի բառ  
անելով լածառականի խանութից գողացած ասկով  
մեքը արկղիկը, սրտի ու բախութիւնից առում են, —  
Օ՛յ, Օ՛յ, առանց քրտինք թափելու էսքան ոսկի ունե-  
նալ ո՞վ է տեսել, ես միջոցին այդեպահնը, որին նո-  
քայ յառաջուց էին նկատել այն ծառի վերայ թա-  
ռած, ամենայն զօրութեամի ինձորները թափ առ-  
լով նրանց գլխին, աղաղակում է, — առանց երկինքը  
ամսկելու էսքան կարկուտ գալ ո՞վ է տեսել: Գաղե-  
րը շփոթուած ոսկիքը թողում են ու փախչում:

Անիծարան պառաւին ասացին, —ինչո՞ւ ես էր  
քան անիծում չե՞ս գիտում որ բիրանիցդ դուքս ե-  
կածը ծոցի կը թափուի: Պառաւը պատասխանեց, —  
եթէ էկացէս լին էր, հիմայ վազուց պէտքէր իմ ծոցից

մի ահազին սար բարձրացած լինէր ու ձեզ տակո-  
վըն արած:

Զօր ոտն էր ցաւում, որդու աչքը. երբ վեր-  
ջնը ցաւի սատկութիւնից շատ էր մորմոքում ու  
օգնութիւն կանչում, հօր սիրոր չփիմանալով ասայ, —  
ախ՝ որդի, իմ ոոր քո աչքը:

Հիւմնդը առողջից հարցրեց, դու որ աղօթք  
ես անում, ի՞նչ ես խնդրում այս վայրը բանալ  
այս — Քու մահի, պատասխանեց առողջը: Եղանակով  
միանուի նա էլքու առողջութիւնդ, ասաց հիւանդը:  
Հարով, թաթոս, ձեր գեղումը ի՞նչ խարար  
կայ.

— Էլ մի հարցնի նազար. ես տարի մեր գեղեցը  
շատ մարդիկ մեռան:

— Իս դու ինչո՞ւ չմեռար:

— Էնդուր համար որ քեզ թաղեմ:

— Դաս դու ինչո՞ւ չմեռար:

— Որու մեծ կ'ինիս, թէ ես, հարցրեց Վարդանը:

Մինասից: Նոյ ոց միտու ու նիւնոն ձգում ու զոյզը

— Խելքով ես, փեղով արդու, պատասխանեց  
Մինասը:

— զէ, հանաքը գէն կենայ, ո՞րու ենք հասա-  
կով մեծ:

— Դու ո՞ր տարին ես ծնուել:

— Ես ծնուել եմ մորեխի տարին, իսկ գո՞ւ:

— Ես էլ ճանձի.

— Ե, ինչ գուրս եկաւ.

— Ոչինչ, Ճանձ ու մորեխ:

\* \* \*

**ԳՅՈՐՓՈՂԱԳԻՄ** անկիւսում ջտհիները Հաւաքուած  
կախարդ պառաւի գլխին, լուսմ էին նրան գուշակու-  
թիւնները ու սփոցեր տալիս: Անց էր կենում՝ այս  
տեղից մի ծեղունի մարդ, տայէլ խելքը ջտհիների  
հետ զնելով, մօտացաւ կախարդին ու ասաց, — եթէ  
ինձ համար լաւ գուշակութիւններ կանես, իմացիր որ  
լաւ վարձատրութիւն կ'ստանաս: Աախարդը առառ  
վարձատրուելու յուսով, նյին վայրկենից սկսեց գործ  
գնել իւր լեզուի բոլոր ճարտարութիւնը թեթևամիա  
ծերունու առաջ: ամեն բան լաւ էր գնում, բայց  
երբ որ հասաւ էն տեղը թէ, գու որդիքներիդ  
մահը չես տեսնի՛ ծերունին տրամեց ու սաստիկ  
զայրաննալով պառաւ կնոջ վերայ, ասաց, — յիմար գը-  
լութ, ես աեղ տռացի ինձ համար լաւ գուշակես. բայց  
երբոր ես պէտքէ մեռնիմ ու որդիքս ինձ թաղեն,  
ուրեմն թող նրանք զանքեղ վարձատրեն:

\* \* \*

Թափլիսում, երբ ամեն բանի թանգութիւն էր  
արևելեան պատերազմի պատճառաւ, սակաւ ոռջկի  
ծառայող մի Հայ վարժապետ ութ կոպէկով մի գրբ-  
գանքայ զազար է առնում մախոսի համար և յանձ-  
նելով ծառային, պատուիրումէ նորան, — աղջիկալարո-  
նիդ կասես, չթողնի երեխեանցը մէկ մէկ լարլա-  
րուջ անեն (համաեսուկ անել): Էս երեանը չի որ  
ութ կոպէկով մի լիտր գազար տանենք:

\* \*

**Լ**արաբաղցի Ասրիբէկն իր աղջկանդ տռւեց  
մօրից համր (մունջ) Մագաթեանց Գաւեթ բէկին,  
բայց աղջկայ եղբայրները համաձայն չէին. Էս պատ-  
ճառաւ էլ իրանց հօրից խռովեցին: Մի անգամ մեծ  
հացկերութեան հանդիսում Ասրիբէկն ու նրա որ-  
դիքը հրաւիրուած էին: Նրբ որ որդիքը ներս մտան,  
տեսան իրանց հայրը այնտեղ նստած էր, կամենում  
էին յետ գառնարը բայց տանտէրը աղաչեց նրանց իր  
պատիւը գոնէ պահելու համար ցըց չ'տան իրանց  
սրտնեղութիւնը և յօժարեն մնալ: Ասրիբէկը էս  
բանը լսելով, տսաց հանդիսականներին, աբէկեր, ա  
պարոններ, լսէք իննդիրեմ իմ որդւոց խռովութեան  
պատճառը. դրանք խռովալ ըն թէ ինչի՞ ես աղջկանս  
տռւալ ըմ մունջ իսխի: Էդ լակուները օզրւմ էին  
որ աղջկանս տռւել էի լեզու օնեցող աղի, որ բարկա-  
նալիս աղջկանս վրայ, հոգիս, հաւատս, գերեզմանս

Էր օշունց տուել, մշիկ տուել ըմ մունջի, որ եփը  
բարկանայ աղջկանս երայ, Էնքան բլբլացնի որ ջա-  
նը տիւս կեայ:

Այսուհետեւ առաջ է զարա ք բազմակ  
ուսուրի ծրա մայզու ձեռք \* յառար մայրա իշխանի իր ծմ

Արդրումի Սարասկեարը իւր բանակով իջած էր  
Բայազետի տակը. Նրա ջօրին կորաւ, Հրամայեց մունիւ-  
տիկին Հրատարակել: Նա էլ իսկոյն ական բարձրաւ-  
ճայն գոռառլց Մեր Սարասկեար էֆենտու ջօրին կո-  
րել է, ով որ գտել է, բերէ, թէ ոչ, մեր Սարասկեար  
էֆենտուն կը նեղանայ համ. Սէրէսկեարը որ իր  
վրանունը մայնակ շրջուանը ու լուսմ մունակի աւ-  
սածը, նրա ձայնի հետ ինքնէլ շուտ շուտ կրկնուի  
էր “’Ե հարկէ, ի հարկէ կը նեղանամ:”,

\* \* \* Յա տովքանդ ցցը

Սաստիկ ցուրտ էր, Սաղարակից պէտքէր գնա-  
ինք Դավալու, Հայրապետ անուն մեր ծառային եր-  
կու ժամ առաջ զրկեցինք, որ գնայ այնաեղ, մի սե-  
նեակ գտնէ ու թէյ պատրաստէ մինչև մեր համնելը,  
բայց ընդհակառակը մենք գտանք նորան Ճանապարհի  
կիսին երկու ուրիշ ճանապարհորդների հետ այնպիսի  
տաք վեճաբանութեան մէջ, որ մեր վերայ էլ ուշա-  
դրութիւն չէր դարձնում: Տօ իմար բարկանալով  
յասացինք, մենք քեզ գործի ենք զրկել դու էստեղ  
ի՞նչ ես շնում: Նա պատասխանեց, էս երկու հա-

յերը, որ մինք ձի ունի, միւսը կոմ, ուզումէին փոխել  
բայց չէին համաձայնում գնումը, մեղքս գալօք  
սպասեցի սրանց առուտուրը զիուլս բերեմ; յեսոյ  
գնամ ձեր հրամանը կատարեմ:

\* \*

Կարբեցին ու Սատանէն ընկերանալով գազար  
ցանեցին էն պայմանաւ, որ արմատը Կարբեցին վեր-  
առնէ, տերեւ սատանէն: Աշնանը իւրաքանչւրն  
իւր բաժինը տարաւ. Սատանէն տեսաւ խարուածէ,  
լոեց, յետոյ երբ գարունը բացուեց ընկերութեամբ  
ցորեն ցանեցին, որ արմատը էս անգաս Սատանէն  
վեր առնէր, մնացեալը Կարբեցին: Վերջը Սատանէն  
տեսաւ որ սրանում էլ է խարուած, ասաց Խարբե-  
ցին օխտը որ ինձանից առաջ է ծնուած:

\* \* \* Յա տովքանդ ցցը

Յա բանց ըմբուծ մայիսունիւնիւն Յա տովք  
առիւն Սուսիի լեզվին զադաք էր մասնաւնումի հայից:  
Հայն ինչ զադաք ցոյց տուեց նա չհաւանեց: Ի վեր-  
ջոյ Հայը կրացաւ զափաղեցը ուրիշ զադաքներ հա-  
նէ ցոյց տոյց, լեզվին տեսաւ նորա վարտեկը պատ-  
ռած, նստելատեղը երևումէ, ասաց բարեկամ, էստեղ  
հազար զադաք ունիս, ինչի՞մէկը նստելատեղում  
չընիս ուզմանաւ ով զնու անել ուղարկան զավահնաւ-  
սաւ ու բան զայտանաւ \* մորդի մէ ամ, ոյ զ մարտն  
Ք քոր չ մայութ ուղարկար, ուղարկան զնուն մոր

Անհարովակ Թադիամթեանցը կապայ ասած ասի-  
ական վերաբկուով, բայց եւրոպացւոց դժակով Հնդ-  
կաստանից գալիսէ Ենիրազի մօա մի գեւդա օժեւմնէ  
ուղղում, չեն տալիս, 'ի վերջոյ դիմումէ գեղի քեդ-  
խուղին: Սա հարցնումէ ինչ աղդես: Թաղիադ-  
եանցը պատասխանումէ. Ֆուանգեմ այսինքն  
Եւրոպացի (ըստ որում, եթէ ասէր հայեմ, գուցէ  
տեղ չտար) Քեադխուդէն նայումէ նորան  
ու ասում, եթէ Փառնգես, ինչի՞ քամակդ  
ճղուածէ:

Մեսրովակ Թաղիադեանցը վարժապետ էր Թափ-  
րէզ: Ա. Ա. անտեղեակ լինելով ուսումնարանի կարդ  
ու կանոնին, արգելք էր լինում նրա կարգադրու-  
թիններին և դասատուութեան ձեին, այս պատ-  
ճառաւ մեծ անբաւականութիւն ծագեց նրանց մէջ:  
Նո կամենալով նրանց հաշտեցնել, մի օր Թաղիա-  
դեանցին տարայ Ա. Ա.—ի տունը, ուր կային քանի մի  
եղիրացի պատուելի մարդիք էլ: Սրանք երկուոր  
դարձեալ սկսեցին իրանց վիճաբանութիւնը, յանկած  
Ա. Ա. Թաղիադեանցին ասաց—էլի յիմար յիմար  
պկսեցիր խօսել: Թաղիադեանցը, որ շատ կրտս և  
անհամեր բնաւորութեան տէր էր, ամենքս վար-  
մացանք որ, նա էն կէտին անտարբեր մնաց ու սառ-  
նութեամբ ասաց,, պարոններ, կարելի է դուք էլ

Նկատած լինիք, որ երբ որկու կնանիք կովումնն  
իրար չետ, պատահումէ որ նրանցից անբարոյականը  
և բամբառուածը շուտով ինքնէ միւս պարկուշտին  
պոռնիկ անուանում, նյուպէս երկու կուռող տղամարը  
դիմաց մէջ առաջ յիմարնէ խոլօքին յիմար անուա-  
նում, ինչպէս այժմ փորձեցիք, բայց պարոն Ա.  
լաւ իմացիր, որ եթէ դու պաշտօն և իշխանութիւն  
չունեայիր, այժմ էս պարոնները երեսիդ կասէին  
թէ դու ինչես, ես ինչեմ, այժմ նրանց տեղ ես ինքս  
կասէմ, որ իմ կօշկիս տակի կաշին (ոտք բարձրաց-  
նելով ու ցոյց տալով) քո գլսի կաշիկցը տեկի  
բարակէ և աւելի հարկաւոր է, որիմն մնաս բա-  
րով, ոչ թէ քո տանից, այլ խսպառ Թափրեզից դուրս  
գնալուս համար: Արգարեւ միւս օրը լըմը չբացուած  
Մեսրովակը դուրս էր գնացել Թափրեզից:

Տէր—Յովհաննէսն ասաց Մեսրովակ Թադիադի-  
անցին, վարժապետ, դու միշտ Ա. Ա.—ի համար ա-  
սում էիր թէ նա յիմար է, տիմարէ, հաստագրուխէ,  
տեսաք այժմ, որ նրա նման տիմարը Էնքան արեց,  
որ քեզ Թափրեզիցը դուրս արեց: Թաղիադեանցը  
պատասխանեց. տէր հայր, եթէ մի սատկած իշե  
ծնօտը կարողացաւ հաղարաւոր մարդիք սպանել  
միթէ երկու ծնօտը էր կարող մի Թաղիադինցի  
դուրս հանել Թափրեզից:

Ծի զիշեր գողերը մտնումեն Թաղիադեանցի  
սենեակը, Թաղիադեանցը վերէ թռչում անկողնեցը,  
շապիով դուրս փախչում ու ձեռք սրախ վրայ դրած  
գուռում, ախաղերներ, ինչ որ ևս ունեի, հետո դուրս  
բերե, իսկ ինչ որ մնացելէ ներսը, իմա չէ, աշխար-  
հիննէ, ինչքան կուզէք, վեր առեք, տարեք,  
ձեզ հալալ է:

\*

\*

Աղքատը կէս զիշերին զարթացրեց կնկանը թէ  
վեր կաց վեր կաց լաւ միջոց դտայ հարստանալու,  
ուրախացիր. կինը ասաց. քա, ինչո՞վ:  
— Հալվայ, հալվայ շինելով:  
— Հալվին շաքար կամ մեղրէ հարկաւոր, ո՞ր  
են դրանք,  
— Փառք Աստուծոյ ալիւր ունինք, շաքարն ու  
մեղրը հարկաւոր չեն, առանց նրանց էլ հալվէն  
կծախեմ:

— Քաղցր որ չըլնի ով կառնէ, կամ սխալմամբ  
մի անգամ առնողը միւսանգամ ի՞նչպէս կառնէ:

— Աշխարհում էնքան յիմարներ կան, որ եթէ  
նրանք մի մի անգամ առնեն, էն էլ ինձ կը հարստացնէ:

\*

Պարսից նախարար հաջի Միրզա Աղասին Թէհ-  
րանի մօա մի հայ գեղէր շինել առլիս ու նրա

համար քեանքաներ էր բանացնում, որ ջուր բերեն  
գեղը: Քեանքեան վարպետները մի քանի անգամ նը-  
րան ասացին անմեղ տեղն էք այնտեղ ջրի համար  
փող մնխում, ջուր չի դուրս գալ: Հաջին պատաս-  
խանեց, եթէ գեղի համար էնտեղից ջուր չի դուրս,  
գալ ձեզ համար խօմ հայ դուրս կ'զայ, գնացէք  
բանեցէք:

Հաջի Միրզայ Աղասին Թէհրան մեծ հրապա-  
րակամ կանգնած, թժնգանօթներին էր նայում ու  
շատ բազմութիւն էլ նրան շրջապատած էր, տեսաւ  
մի մօլլայ յանդգնաբար ձղեց ամբոխը, մօտ եկաւ  
ու մի թղթի կտոր մեկնեց իրան: Հաջին առաւ,  
կարգաց, տեսաւ որ Մահամետ շահի ձեռագիրնէ,  
որով հրամայումէ մօլլին քսան թուման պարգև տան,  
հարցրեց, մօլլայ ի՞նչ ծառայութիւն ես արել ո՞ր  
շահը քեզ էսպէս պարցւատրել է:

Ես օր Դաղլինից փուստայի նօրար էի բերել  
շահի համար, վասնորոյ և նորին մեծութիւնը ինձ  
էդքան պարգև շնորհեց:

Եթէ ամեն մրգեցէնի նօր ար բերողին այլպէս  
պարգևատրենք գանձարանում էլ դրամ չի մնալ  
ահա էսպէս կը վարձատրեմ քեզ ասաց ու  
թօւղթը պատռտեց ածեց ցելսի մէջ, յետոյ ձեռքի  
գաւագանով խառնելով ասաց, անս էնպիսի ձեռա-

գիրը էսպէս ցեխի մէջ կձգեմ, կը խառնեմ; հիմի  
ուր կուզես, գաւ գանդաս արան: Մոլէն պատասա  
խանեց. Աղա, դու բորդ Պարսկաստանը ցեխի մէջ  
ածեցիր, խառնեցիր, ոչ ոք չկարողացաւ քեղանից  
գանգատել, հիմի ես ո՞վ եմ որ գանդատեմ:

\* \*

Թիֆլեղից էջմիածին ուխա գնացողները, ձա-  
նապարհի ահիցը Բերոյին իրանց առաջնորդ կ'տա-  
նէին: Մի անգամ Վաղախ ասաց տեղը, ուխաւոր-  
ները իջան մեծ կրակ արին ու ոչխարը խորոշելով  
ուտօւմ էին ու զինին խմում, յանկարծ էս միջու-  
ցին թուրք աւազակները գուրս թափուեցան ան-  
տառից, նրանց ձիանքը բաց արին որ տանին: Ուխ-  
աւորները միաձայն գոռացին. — Բերջ, Բերջ օգնէ՝  
գողերը ձիանքը աւանումեն: Բերն մի ձեռքով դիմու-  
գաւաթը և միւսով խորոշածի կտորը բռնած, պա-  
տասխանեց, բերոն ջեր չէ տաքցի: Գողերը տեսնե-  
լով կարաւանի մարդկանց անտարելը մնալը, մոտե-  
ցան խուրջ իններն էլ վեր առան: Ուխաւորները  
դարձեալ դիմեցին Բերօին: Բայց նա առանց տեղիցը  
շարժուելու նոյն խօսքը կը կնեց, Յետոյ գողերը նրանց  
էսպէս վեճակի մէջ տեսնելով, մօտեցան միւս  
ծանրութիւններին: Ուխաւորները կրկին ահով ու  
գողով առաջարկեցին Բերօյին օգնել, բայց դարձեալ  
նա կրիսեց, Բերօն ջեր չէ տաքցի: Վերջը գողերը

վստահանալով, մօտեցան Բերօյին, որ նրա հրայցանը  
վեր ունեն, իսկըն Բերօն առեղից վեր  
թռաւ, ձեռի մէջ թքեց ու իրան մօտ դրուածհաստ  
գաւազանը վեր առնելով ասաց, հիմի Բերօն ապք-  
ցաւ, ու սկսեց գլազանի նման գողերի վերայ յար-  
ձակուել ու սրմն, նրան հարուածելով դեռնի վերայ  
փոել: Գողերից, որոնք հեռու էին, Բերօյի անունը  
Ըսելիս, ամէն բան վայր զցեցին ու վիախան: Բերօն  
նրանց ջալութիւնի կողմից էլ թուրքերէն ասումէր,  
բայց ամուռում որ Բերօյի կը ոյ էք դալիս: \*

Հայկերութեան մէջ խօսք ընկաւ ծառաներվ  
վերայ, թէ որնէ լաւ, որը վատ: Տանտէր Ստեփան  
իան Մէլիք Մինասիսկանն ասաց, էն իմ շուն շան  
որդի: Պետրոսը շատ լաւ անգին ծառայ էր, ափամն,  
որ գուրս գնաց: Միւս ծառայն որ ներկայ էր, ասաց,  
խան եթէ լաւին շուն շան որդի եա անուանում,  
վատին, արդեօք, ինչ անուն կը տաս, մնաս բարձով  
ես գնացի: Եթէ նախուանը լաւ աշխ բայց  
մասն առջաւանու բժան \* բժան վիստով խոյւորը  
մասնիվ, բայս ցնում են \* Ցնում ցանալունաց զայի  
կա: Պորպորկովնիկ նրուալէմսկին պարծենում էր  
թէ, ևս տարին ինն մանէթով եմ սկսել իմ ծառա-  
յութիւնը Տերութեան և հիմի 1200 մանէթ տարե-  
կան թոշակ եմ ստանում գանձարանից: Խանդամի-

բենց Թաղէսոր պատախաննեց, ևս երեք տարին ինն  
մանեթ ռոճկով ևմ սկսել: Երուսալէմսկին ասաց,  
ուրեմն դու արածեաւ զոշխարս իմ: ՞Այս ժամ, առնե  
գուտ օջախ մեջ բայում \* իմ մասում ովհի պիտույքը  
այս տաղեւ նրան մաս մասույքը բայր ու այս  
այս Շոշեցի Ռեմբի բէկը մի տումակը գրեց յանձ  
նեց իւր ծառային, որ տանէ տայ Նիսինց Խաչտու  
րին: Վերջինը բաց արեց կարգաց այսպէս ռնաչաւ  
տուր եղբայր, ես գրաբեր կոտիկ ծառէս ինձ շատ  
ա բարկացը բլ դու իմ վրայ լաւ լաւ ուշունցներ  
տալ գիտես, ինդրումեմ իմ տեղակ քո էն լաւ ուշունց  
ներիցը սրան տաս, որ իմ սերտը հովանայ: :

Խունաւո՞ ային պայ ։ \* ամ մասն նոյն պայ  
մաքամով ուստան այս այս ամ մասն նոյն պայ  
մաք ։ Աղի Միրզայ Աղասին ամսւմնացէլ էլ,  
ֆաթ—Ազի շահէ մեռնելից յետոյ, նրան մի տիկնօջ  
հետ, որ շահիցը մի որդի ունէր Ելիսանի անուն:  
Աս ամէն օր գալիս էր Հաջու մօտ ապօրինի խնդիր  
քներ էր առաջարկում: և նա թէ կատարումէր,  
բայց միշտ էլ խոճահարվում էր. ՚ի վերջոյ Հաջին  
զգուելով Ելիսանի ստէպ ստէպ առաջարկութիւննե  
րիցը բազմականաց մէջ \* ատենումը ասաց, Ելիսանի  
Ելիսանի, ես քո մըր միանգամ համբուրեցի, դու արի  
ինձ հարիւր մնգամհամբուրէ ու ինձանից ձեռը վերա:

Այսու Ելիսան 0021 մէճ ա մատելով յոյզ յանու  
մատաւուն ըցնաւուն ապ ամաւուն և բայսուն մաք

Կարապետ եպիսկոպոսը բարկանալով կոնսիս  
տուրիայի քարտուղարի վերայ, անուաննեց նրան լր  
բազմն: Քարտուղարը պատասխաննեց, փառք Աստու  
ծոյ Սրբազնն, որ այժմքո և իմ վերատութեան  
մէջ միայն մի տառէ փոխալում:

\* \*

Մի օր զրոյց բացուեց ծառաների վրայ, մէկն  
ասաց, ես մի ծառայ ունէի, ձմեռուան ակզբից մին  
չեւ վերջը հազիւ կարողացայ նրան սովորեցնել որ  
գուուր փակած պահէ, այսուհետեւ օր ամառը հա  
սանք, հազիւ կարողացայ վեց ամսումը սովորեցնել  
որ նա գոները բաց թուիւ: Այս բայս ու գուուր ու մատաւուն առ Ելիսան  
մաք:

Յ. Մ. վատ բերան ունէր, ծառաների վերաց  
բարկանալիս անխափիր վատ վատ յիշոցներ կըտար:  
Մի անգամ ծառան վշտանալով նրա յիշոցներից՝ ա  
սաց, պարոն, իմու քո մէջ մի զանազանութիւն կոյ,  
այսինքն գու զայրանալիս յայտնի ես ինձ յիշոցներ  
տովիս, իսկ ես միկունը ամսուան եմ քեզ  
վերադարձում և մեջազ ու այս նույն պատուան անունը  
ու այս անունը մատաւուն ապ ամսուան սունը ու ամսուանը  
անունը ու այս անունը \* \*

Թէհրան մի երեելի խան հիւանդացաւ, հրամա  
յեց իւր ծառային (Փառուաշին) գնալ մի բժեշկ կանչել:

Ֆառաշը գուրս գնաց, փողցումը պատահեց Դա-  
շիթ խան Մկրտչանց բժշկին, հրամիրեց նրան ու  
տարսու իւր խանի մօտ: Դաւիթ խանը քննեց հի-  
ւանդի տկարութիւնը, գեղ զրեց ու գործածելու կեր-  
պը սովորեցնելով գուրս գնաց: Բժշկին հրամիրող  
Ֆառաշը, որ բակումը նրան սպասում էր, բոնեց  
թէ, պարո՞ն բժշկի, ինձ զուլլուղ տուր, այսինքն ծա-  
ռայութեանս համար վարձ: Բժշկը պատասխանեց,  
բարեկամ, ես ինչ վարձ ծառացայ քո խանից, որ քեզ  
ինչ տամ Բժիշկը ուղարմ էր գնալ բայց Փառաշը  
թոյլ չէր տալիս: Բժշկի համբերութիւնը հատնե-  
րավ վերադարձաւ խանին յայնեց Փառաշի յանդո-  
նութիւնը: Հիւանդ խանը ծիծաղելով տանց, պարզն  
բժշկակատ, դու էլ հօ երոպացի չես, որ մեր ոռ-  
վորութեան անտեղեակ լինիս, զիտես որ գրանք ոռ-  
զիկ չ'ունին, զուլուզով են ապրում, դրան մի բան  
պարզեց, մեղքէ: այս այս դասին այսամբնաց  
\* \* \*

Պուլ Պուլու քոյրը իրանց տանը հինգ տարի  
ծառայող Մուքուն միշտ կը հայհոյէր ու նրա կա-  
տարած ծառայութիւններին չէր հաւանիլ, ի վեր-  
ջոյ ստիպեց եղբօրը որ նրան գուրս անէ, մի ուրիշ  
սպասաւոր լերէ, որովհետեւ Մուքին շատ յիմար է:  
Պուլին պատասխանեց, ա քիլ առաջ պտուտենք,  
մինը դանենք, որ Մուքու վերայ յիմար ըլի, էն  
ժամանակը Մուքուն գուրս անենք, նրան բռնենք:

\* \* \*

Մի քանի հին վարպետ թուղթ խաղացողներ  
հրամիրեցին կնեալ Աւոն Յիցիանովին ասօնաս խա-  
ղալու և շատ էլ փող տարան նրանից: Վերջը Աւո-  
նին յանկարծ չորս աս (մէկանց) եկաւ և նա մո-  
քումը դրեց որ էս անգամ իւր տարուած բոլոր փո-  
ղերը յետ բերէ: Վախելով թէ մի գուցէ լաւ չէ  
նկատել իւր թղթերին, ձեռն առաւ որ կրկին նայէ  
յետոյ միամիտ սրաով փողն աւելացնէ, նրա ծառան,  
որ զիսավերելը կանգնած էր հենց որ նշմարեց թըղ-  
թերը, անհամբերութեամբ ուրախութիւնից բղաւեց,  
օչ, օչ, հազիւ իմ պարոնին չորս աս եկաւ: Միւս  
խաղացողները լսելով ծառայի առածք, փառ արին,  
փախան:

\* \* \*

Թաօմաս Զալալիսնը բարեկամի տանը հրամայեց

Նրա ծառային, որ կրակ բերէ ցիկարը կալցնելու  
համար, ծառան խոկոյն կատարեց և նա ցիկարը կպց-  
նելուց յետոյ ասաց, շնորհակալ եմ, Աստուած էն  
կեանքու մը էդպիսի կրակը հօրդ հոգու դէմ բերէ:  
Ծառան կլուխ տալով ասաց.—Աստուած էլ կեանք  
այ քեզ:

\* \* \*

Մելիք Շահնազարեանը մի երեկոյ իւր Թիւնի  
ծառային ասաց, ատահ հազիր կացի՛ր, որ ըռաւոտը  
քեզ գրգրւակալէ եմ զրկելու: Միւս օրը Մելիքը ա-  
ռաւօտեան զարթեց, գուրս եկաւ, տեսաւ Թիւնին  
զրահաւորուած ներկայացաւ ու գլուխ տուեց իրան,  
ասաց, Տ' ը, Թիւնի հազի՛ր ըս, քնաս շնոր, Թիւնին  
պատասխանեց, Մելիք, քնացի ու եկի:

— Ատահ կոտիկ, որ քնացիր, Հի՞նչ ըթիր:  
— Հի՞նչ էի լնելացուք, ասիր պիտի զրկեմ շե-  
նը, ես էլ քնացի ու եկի:

\* \*

Վարդապետը որքան խրատում էր իւր տիրա-  
ցուին թողնել լիշոցներ տալու սովորութիւնը, էլի  
տիրացուն մոռանում էր. յետոյ հրամայեց նորան,  
որ մի փոքրիկ քար պահէ լեզուի տակ: Մի անգամ  
նրանք երկուսով ուրիշ տեղ էին գնում. յանկարծ ծա-  
նապարհին ասատիկ անձրեսի պատահեցան ու շատ

նեղացած հասան մի գեղ Առաջին պատահած տան  
դուռը թակելիս մի նորահարս դուրս եկաւ, տիրա-  
ցուն ասաց, քոյրիկ, հայր սուրբը անձրեիցը թռ-  
ջուած է, կարելի՞ն մի տեղ տաս մնանք, մինչեւ ան-  
ձրել անց կենայ: Հարսը դուռը բաց թողեց ու  
առանց պատասխանելու վերադարձաւ տուն: Նրանք  
սպասում էին թէ կարելի է սենեակը պատրաստու-  
մէ, կրակ է վառում, որ վարդապետը շորերը ըռ-  
րացնէ, բաւական ժամանակ անցաւ, հարսը դուրս  
չեկաւ, անձրեն էլ շարունակ գալիս էր, դարձեալ  
դուռը թակեցին հարսն եկաւ, ու շուտ տիրացուն  
հարցրեց, հ'ը, քոյրիկ, սենեակը պատրաստ է:  
— Զէ, պատրաստ չէ:

— Բա, էսքան ժամանակ ուր էիր գնացել ինչ  
էիր շնում:

— Իմ հանգուցեալ սկեսուրը ասել էր ինձ թէ,  
երբ վեղարաւոր վարդապետ տեսնես, անխօս գնաս  
թուխսի տակը ձուաներ գնես, ձուտերը կատարաւոր  
կը լինին, ետք էլ թուխսէի գնում, որ փորձեմ, տես-  
նեմ: Հանգուցեալ սկեսուրիս ասածը ճշմարիտ է թէ  
ոչ: Տիրացուն շուտ եկաւ վարդապետին ապաց, հայր  
առարի ինձ խրատումիր ուշունց շտամ, հիմայ  
տեղը չի որ լեզուիս տակի քարը դէն ձգեմ ու  
թերանս բանամ մշյափում առաջ գոյ գոյացորդը Ս  
առաջ ու ու նույն նույն ու աշոյ ու նույն սարս  
ածու շնու շնու մինի \*\*\* ու աշոյ ու նույն պուլ

Ա. Ալադաթեանցը պատմում էր թէ, ես մեր տանակի ինները բանալիքները ժողոված շարած մի թէկի վրայ, որպէս թէ զգոյշ են և պարծենումն որ տանը ամէն բան կողպած ունին, ծառաները կամ աղախինները գողովթիւն չեն կարող անել բայց օրը տանը անգամ տեսնումն որ աղջեկալարունները բանալիքները կողցրած, դէս ու զէն պատում են ու չեն գտնում, յետոյ լսումն որ ծառան կամ աղախինը իրանց գրպանիցը հանելով յառաջ են վազում ու ասում աղջիկալարոն, առ բանալիքները, այս ինչ այս ինչ տեղ ձգած էին, վերառայ պաշեցին Սրանք որ լսեց Ա. Զիմշիդովը, զարմացած հարցրեց, էդ ո՞վէ մեր տան մէջ ամենօրուայ պատահած անցքը քեզ ասել, որ պանանիւմ էս Ալադաթեանն ասաց, ուրեմն ձեր տունն էլ մեր տան տիսուր վիճակումնէ եղած:

\* \* \*

Թիգրեքերէն, երեւելի բանաստեղծ Մարգաթով Միրզաջանը հարբած առն եկաւ, տեսաւ որ մի քանի վրացի թափագներ արդէն իւր մօտ հաւաքուած հրամայել են ծառաներին ընթրիք պատրաստել որ էս գիշերը քեֆանեն, երբ սեղանի վերայ նստեցան, Միրզաջանը իւր ծառայ Քեաֆարին ծածուկ տասց, ագա, տեսնում ըս լըհա ևս խմած ըմ ու էս լսկուները իմած չըն, իմ հետի զինին քիչ քիչ ածա

Մասում, ես ջրով խառնէ որ նրանք տեսնեն հուչ, մին զալամ, ինձ կառումէ պահիր: Երբ սկսեցին խմելի, Միրզաջանը տեսաւ որ Քեաֆարը վրացիների համար կիսատ կիսատ ա ածում գինին, իրան համար լիքը լիքը, ասաց, Քեաֆար, ադա լսկուտ, թէ քետեցի ինձ կոնումդ պահիր: Քեաֆարը պատասխանեց, աղա, քէ մասաղ, էդ կոտիկները չինչ ըն գիտայես զինու ղաղրն (արժողութիւնը), էլի լաւ որ գիւ խմես որ ղաղրը գիտաս:

\*

Ա արդապետը համայնց իւր սպասաւորին որ զիրաբա խօսէ, վարժուի: Սպասաւորը մի օր նելամատ խուցն ասաց. հայր Սուրբ, սարի ծագկակոխը էս գիշեր եկելէ մեր մոխրաթավալին բարբառելով մաքրազարդել: Վարդապետը չ'հասկանալով ասաց, մեկնէ, տեսնեմ ինչ ևս ուզում ասել: Սպասաւորը մեկնեց թէ գիշեր էս գիշեր մեր իշեն պատռել կերելէ:

\* \* \*

Միրզաջանը մի պատանի սպասաւոր ունէր Քարամ անուն, որին մոշալուն կը կոչէր: Մի օր էլ ձայն տուեց. — օյ մոշաղուն, քնի ասա խանումին, մի հերի այ քել բեր: Քեաֆարն ասաց, աղա, հինչ կա, օղուտս մոշալունշիդ իշեալս ըմ ըստով չ' մասք ըստոյ առանց զրույա զրույա զրույա:

Դատաւորին լուր բերին թէ այս ինչ երկելի  
հարուստ մարդի ազգականը պոսնկաւթեան համար  
կալանաւորել են: Դատաւորը գարմացած ասաց, ան-  
կարելի որ Էնպիսի հարուստ մարդի աղջիկը պոռ-  
կութիւն արած լինի: Մի ազքատ ծիր մարդ ներ-  
կայ լինելով խօսեց, Տէր Դատաւոր, Աստուած ամեն  
թշուառութիւն ու վիշտ տուելէ աղքատին բաւա-  
կան չէ պոռնկութիւն Էլ է տուել նրան:

\* \* \*

Թիֆլիսի ժողովուրդը յանկարծ վերկացաւ քա-  
ղաքագլու, ուունը քանդեց ու նրա կայքը թալա-  
նեց, միևնույն ժամանակը պարսից հիւպատոս Խւուֆ  
խանն էլ մի ուուն գտեց Թիֆլիսումը: Դաւառապետ  
Յրլովսկին նրան շորհաւորելով ասաց, պարօն հիւ-  
պատոս, այժմ դուք մեր քաղաքի քաղաքացութեան  
իրաւունքը ձեռք բերիք, ի նշ զարմանք, որ քեզ էլ  
ժամանակով քաղաքագլուխ ընտրենք: Խւուֆ խանը  
պատասխանեց, ինչ է, ու դումէք իմ տունն էլ քանդել  
ու կայքս էլ թալանել տաք:

\* \* \*

Գեղեցին գուշակը գեղաւում է անազարյուն Ո  
ոյ այլ այցու ցը ամուսնու մեր մասն նախա  
Գեղեցին գուշակը գայլի քամակիցն ընկած հալածում  
էին. գայլը շուռ եկաւ, տեսաւ որ գարբնի շունն  
էլ է նրանց մէջ, ասաց, Էս միւս շների նախրաջների  
տանիցը, բակիցը, ախոռիցը, ճուտ, ոչխար, գառն

իմ փախցրել, նրանք էլ ինձ խրկումեն, բայց այ գար-  
ընի շուն, քու տիրոջ խանութից ի՞նչ եմ տարել, որ  
դու էլ սրանց մէջն ես խառնուել:

\* \*

Տէրուէրի տղայ Նիկողոսը ըրս անդամ մասնկա-  
ցել էր Թիֆլիս և շատերի փողերը կերել: Մի օր մի  
քանի վաճառականներ փողոցումը խօսումէին թէ  
վաճառականութիւնը ընկած է, շատերը մասնկացան  
և այլն և այլն: Նիկողոսն էլ աւելացրեց, հայ խեղձ  
վաճառականների ճրագը հանգաւ: Միւն ասաց, պա-  
րօն Նիկողոս, քաղքումն դու ճրագ թողեցիք, որ էլի  
վառուե:

\* \*

Մասնանեանցը սնանկացաւ, մեծ պարտքի տակ  
ընկաւ, ու սրտնեղութիւնից հիւանդանով մարդ  
զրկեց բժիշկ Բաստամեանցին կանել տուեց: Բժիշկն  
իսկոյն իմացու որ նրա հիւանդութիւնը շատ մուա-  
ծելուցն է յառաջացած, ասաց նորան և անմեղ ես  
մուածում ու երեակայում որ դու հիւանդ ես, նայէ  
հրապարակիս վերայ (տունը հրապարակին էր նա-  
յում) տես հազարաւոր մարդիկ ինչպէս ուրախ ուրախ  
իրար հետ ասում, խօսումեն ու ծիծադրում, բայց  
ամենքն էլ քեզ նման պարտքի տակեն, եթէ նրանք  
էլ քեզպէս մուածէին՝ հիմայ անկողնում պարկած

կըլինէին: Կրպիսի խօսքելով՝ միսիթարեց Մանանեան  
ցին և առանց դեղի կատարեալ առողջացրեց:

Ա իւր Ս. բարեկամին պատմեց թէ ինչպէս  
իր պարտքերը վճարեց: Դիմի համբարտում, հան-  
գիսակ, յետոյ հարցրեց: բարեկամ, դուք ի՞նչ արիր  
քն պարտասերերի հետայն. պատմախոսնեց վաղթեց է  
ոք և ազագառուած եմ իմ ապաւասամէրերիցին: Այս-  
ու ինչպէտ երազատուած բարին յայտնի է, որ դու  
ոքինչ չես վճարած: պարտքերու վարչուանի  
իւր Արգարէ ոչինչ չեմ վճարած: բայց որովհետ-  
աւ երկար միջոց է անցկաց: լ պարտքերիս ժամանա-  
կեցն ու հնացել են, վասնորոյ միամիտ եմ որ  
ազատուած եմ:

Բայց զգացար օմն արցանան պահանձան: Ա  
քանի խոյնարաւուի ու ինչն ելացրեալը ու այսից  
միշտէ: Ն շատ ազգանի էր, մասսմիւնչին ժամանակ  
կը շատ ամբարտաւան: Երնելով իր ածադրումը հին  
թիֆլիկի քաղաքացիների աղդամահմից և Աւմի գիշեր  
զնաց իշխանի: Թ. տունիր ողօրման թիւնու խնդրեալ,  
փաքը ինչ նկաեց, քիթը ին կողմին էն կողմի Աեկնեց,  
ու ասաց իշխան կարծիմ մի ծանր հրտէ վասնած  
աենեկումզ, իշխանը որքան դեսու դէն հնացեց,  
հոսք քաշեց, ոչինչ վաստ զգաց յետոյ Ա. Յ. անանց,  
հաւ իշխան, իմացայ ին ից է ամբագուի մոլու

վառուած, նրա հունէ: ու մանեանը որ ունի ու ու  
րեց Անդրդ ազատի գմբեկուայ ու միջն ծուռ սոցը  
անու անաւանի մասին ունին և անու ունի:

Աստուր Խայաթեանը քսան մանէթ փոխէր  
տուել նիկողոս Գաւրիշեանին, որից միշտ պահանջե-  
լով ու չստանալով յուսահատուեց, ի վերջոյ մի օր  
հրապարակումը բանեց, շատ ստիպեց, բայց նա գր-  
րամ չընենալով երգումներ կերաւ ու Աստծուն երաշ-  
խաւոր տուեց, որ մինչև 15 օրը վճարէ: Այդ ժա-  
մանակն էլ անցաւ, կրկին պատահեցան միմեանց և  
Խայաթեանը նոյնպէս բաւականութիւն չստանալով  
ասաց, պարոն նիկողոս, դու չէիր, որ Աստծուն  
երդմանը ինձ երաշխաւոր տուիր, չես վախենում նրա  
պատժեցը: Նիկողոսը պատասխանեց, յիսուն արե-  
կան մարդ եմ, ևս միշտ Աստծուն ազօթել եմ, նրա  
առաջին խունկ եմ ծխել մոլ եմ վառել ծունկ եմ  
զրել, որ մի օր նա ինձ հարկաւոր գայ, ինչ կանեմ  
էնպիսի Աստծուն, որ եմ նեղութեան օրը պէտքըս  
չե գալ ու երաշխաւոր չի գառնալ որ ինձ ազատէ  
քեզպէս աներես մարդու ձեռքից:

Մի նպիսկոպոս պատրիարքութեան պաշտօնով  
երկար ժամանակ մնալով Պօլիս ու սերտ բարեկամո-  
ւալով մի հարուստ վաճառականի հետ, էջմիածին  
վերադառնալիս ասաց նրան, բարեկամ, մի սիրոյ նշան

տուր ինձ, որ այսուհետեւ ես :ուր լինիմ, քո ինձ  
ցոյց տուած սէրն ու լաւութիւնը միտքս բերեմ, քեզ  
չմոռանամ: Վաճառականը բաւական ժամանակ մտա-  
ծեց թէ ինչ մի երեելի միրոյ նշան տայ, ի վերջոյ  
աստամների մինր հանել տուեց, թիթում իմաթաթից  
ու տուեց նպիսկոպոսին, որպէս վե միշտ նայէ նրան  
ու յիշէ իրան. ժամանակ անցաւ, վաճառականն աղ-  
